ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

01.11.2013թ.
211-ի 3

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Մեզ է դիմել ՀՀ քաղաքացի Վարդուհի Արամյանը եւ խնդրել է օգնել իրեն տեղեկատվություն ստանալու հարցում: 18.09.2013թ.-ին նա տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել է Երեւանի քաղաքապետարանին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Երեւանի Օղակաձեւ զբոսայգու ո՞ր հատվածներն է հանրային տարածք, եւ ո՞ր հատվածներն են մասնավոր սեփականություն, կամ տրված են վարձակալության:
2. Ի՞նչ պարտավորություններ ունեն այգու որոշակի հատվածների սեփականատերերը (վարձակալները) այգու այդ հատվածների պահպանությունը (շրջակա միջավայրի) եւ կառուցապատումը ապահովելու առումով, եւ տեղաշարժման դժվարություն ունեցող կամ անիվների վրա (անվաթոռներ, էլեկտրական սայլակներ, մանկասայլակներ) տեղաշարժվող մարդկանց քաղաքացիների համար մատչելիության ապահովումը ներառվա՞ծ է արդյոք նրանց պարտավորություններում:
3. Երեւանի քաղաքապետարանի ո՞ր բաժինն (վարչությունը կամ այլ մարմին) է իրականացնում վերահսկողություն կամ պատասխանատու է այգու մատչելիության ապահովման համար, մասնավորապես ի նկատի ունենք անարգել միջավայրի ապահովումը տեղաշարժման դժվարություն ունեցող քաղաքացիների, կամ անիվների վրա (անվաթոռներ, էլեկտրական սայլակներ, մանկասայլակներ) տեղաշարժվող մարդկանց համար:

Ի պատասխան՝ Երեւանի քաղաքապետարանից ստացվել է թերի պատասխան, քանի որ չեն տրամադրվել հարցմամբ խնդրվող տեղեկությունները, մասնավորապես՝ հարցման 3-րդ հարցով խնդրվող տեղեկությանն առհասարակ անդրադարձ չի կատարվել պատասխան գրությամբ, չեն տրամադրվել նաեւ հարցման 1-ին եւ 2-րդ հարցերով խնդրված տեղեկությունները: Միաժամանակ, քաղաքապետարանը առաջարկել է քաղաքացուն հայտնել, թե որ տարածքին է առնչվում խնդիրը: Հայտնում ենք, որ հարցմամբ Վարդուհի Արամյանը ոչ թե խնդիր է բարձրացրել, այլ խնդրել է տեղեկատվություն՝ հետագայում ուսումնասիրություն կատարելու նպատակով: Ուստի, որեւէ տարածք մատնանշել չենք կարող եւ խնդրում ենք տեղեկությունները տրամադրել ըստ կոնկրետ հարցի:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում*:* Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան